

ՓԱՍՏԱՐԿԱԾ ԽՆԴՐԱՆՔԸ ԽՈՍՈՂԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔԸ

Խոսողական ակտերի տեսությունն առաջադրում է հաղորդակցման իրադրության իր ինքնուրույն կաղապարը: Հաղորդակցման ցանկացած կաղապար պահանջում է այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝ խոսող, լսող, արտաբերված ասույթ և հանգամանքներ: Խոսողական ակտերի տեսությունը սրանց ավելացնում է նաև խոսողական ակտի (ԽԱ) նպատակը և առոուները, որոնք իրենց արտահայտությունն են գտնում պերլոկուցիայի մակարդակում [1]:

Հիմնվելով "Իլլոկուտիվ ակտերի դասակարգումը" աշխատության մեջ Ջ. Սերլի [2] առաջարկած դասակարգման վրա՝ խնդրանքը դիտարկելու ենք որպես դիրեկտիվների, իսկ փաստարկումը՝ ռեպրեզենտատիվների մի տեսակ:

Քանի որ փաստարկումն առաջին հերթին կապված է խոսքային հաղորդակցման պերլոկուտիվ կողմի հետ, ապա փաստարկված խնդրանքն ուսումնասիրելիս անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել, թե ինչպես է ձևավորվում բարդ ԽԱ-ի պերլոկուտիվ ուժը, և թե դրանում ինչ դեր ունի փաստարկման ԽԱ-ն: Խնդրանքի խոսողական ակտի պերլոկուտիվ ուժը մեծացնելու նպատակով տվյալ ԽԱ-ն հաճախ զուգակցվում է փաստարկման ԽԱ-ով: Այս դեպքում արդեն գործ ենք ունենում բարդ ԽԱ-ի հետ, որտեղ խնդրանքը հանդես է գալիս որպես գլխավոր, իսկ փաստարկումը՝ օժանդակ ԽԱ: Խոսողի մոտ բարդ պերլոկուտիվ նպատակի ձևավորումը մեծ չափով պայմանավորվում է տվյալ հաղորդակցման իրադրության բարդության աստիճանի վերաբերյալ վերջինիս ունեցած պատկերացմամբ:

Բարդ ԽԱ-ում օժանդակ ԽԱ-ն ստորադասվում է գլխավոր ԽԱ-ին, և, հետևաբար, փաստարկման ԽԱ-ն ընդամենը մոդիֆիկացիայի է ենթարկում դիրեկտիվի պերլոկուտիվ ուժը՝ հիմնականում ուժգնացնելով այն:

Փաստարկման ԽԱ-երի բովանդակությանը հատկանշական է խոսողի համար ղեկարհն կամ անբավարար իրավիճակի արտացոլումը.

1/ խոսողի անձնական անբավարարվածությունն ստեղծված իրավիճակից. օրինակ՝ Mama! I must beg you to retire. This is no place for you. Besides,

Mr. Worthing has not quite finished yet. [3] [p.21]

2/ խոսողի առջև ծառացած որևէ խնդրի առկայությունը, որի լուծումը հնարավոր է միայն հասցեատիրոջ կողմից խնդրված գործողության կատարման դեպքում.

օրինակ՝ Algernon: Might I have a buttonhole first? I

never have an appetite, unless I have a buttonhole first.

Cecily: Marechal Niel? (picks up scissors). [3] [p. 34]

3/ այլ անձանց՝ սովորաբար մերձավորների վիճակի նկատմամբ խոսողի մտահոգությունը. նման փաստարկներում հատկանշական է երրորդ անձի (անձանց) և նրա (նրանց) համար ստեղծված դժվարին կացության հիշատակումը. օրինակ՝ “Evelyn,” Benson said, as the congressman began to throw cards for the first ace to deal, “Tonight you must be merciful. There is a new player.” [4] [p.83]

4/ խոսողի դժվարին կացությունը. օրինակ՝ (գրասենյակում) Իռա՝ ջան, ի՞նչ կլինի, քսերոքսները արա, չեմ հասցնի:

“I am applying for a passport,” I said “And I need my birth certificate. If I write Harrisburg, it’ll take three weeks and I’m in a hurry... Do you think that in the stuff you took from Mom’s house you might find my birth certificate?” [4] [p.68]

5/ խոսողին սպառնացող վտանգը.

օրինակ՝ Վերարկուս տուր գցեմ ուսերիս հա՛. չմոտեն այս քամուն:

Փաստարկման ԽԱ-երի բովանդակությամբ հատկանշական է նաև խնդրվող գործողության կատարման հնարավորության արտացոլումը.

1/ հասցեատիրոջ դրությունը նրան թույլ է տալիս իրականացնել խնդրված գործողությունը. օրինակ՝ “Listen, Doug, I’ve got to see you. Today.”

“I’ve got an awful busy day Hank. Can’t it...?”

“...You’re going to eat lunch, aren’t you?” He said accusingly. “Christ, you can spare an hour every two years for your brother, can’t you?” [4] [p. 312]

Նման փաստարկման տարատեսակներից է հասցեատիրոջ հասցեին գովասանքը՝ նախքան նրա կողմից խնդրանքի կատարումը, երբ նշվում է վերջինիս ընդհանուր դրական բնութագիրը.

օրինակ “I’d appreciate it if you dropped me a line after you’ve seen him to let me know the deed’s been done.”

“I’ll write you,” I said. “There’s a nice boy.” [4] [p.97]

2/ հաղորդակցության իրադրության հանգամանքները տեղը, ժամանակը, հաղորդակիցների միջև հարաբերությունները և այլն, հաղորդողին հիմք են տալիս ենթադրելու, որ հասցեատերը կկատարի խնդրանքը.

օրինակ՝ 1. (գրասենյակում) Սարգիս, շուտ գնանք բանկ գանք, հա՛:

Չորսին հաստատ կհասցնենք էլի այստեղ լինել:

2. “Shall we say that I don’t have it at the moment, but that it’s *available*?

Please don’t wave that thing around anymore. I’m sure we can come to terms without further bloodshed.” [4] [p.153]

Բարդ խնդրանքներում բավականին հազվադեպ է փաստարկի դերում հանդես գալիս խնդրանքի հիմնադրույթի կոնկրետ բացատրությունը. երբ հաղորդողը ցանկանում է, որ հասցեատերը կատարի գործողությունը, այսինքն՝ անկեղծության պայմանը: Սովորաբար, փաստարկման ԽԱ-երում անկեղծության պայմանն արտահայտվում է ցանկություն ցույց տվող ստորոգյալների միջոցով: Սակայն, պետք է նշել, որ երեխաների մոտ անկեղծության այս պայմանը բավականին հաճախ և շատ ցայտուն է արտահայտվում: Օր.՝ Մխր շատ են ուզում, որ գնանք: (3 տարեկան աղջիկ):

Ինչպես արդեն նշվել է, բարդ խոսողական ակտում օժանդակ ԽԱ-ի կիրառումն ուղղված է պերլոկուտիվ արդյունքի հավանականության բարձրացմանը, որն, առաջին հերթին, իրականացվում է հաղորդակիցների միջև անձնական հարաբերությունների այնպիսի ցուցանիշների մոդիֆիկացիայի միջոցով, ինչպիսիք են կախվածություն կամ կախվածության բացակայություն, վստահություն/անվստահություն, շահի առկայություն կամ բացակայություն և համագործակցություն: Ավելի հանգամանորեն դիտարկենք ցանկալի պերլոկուտիվ արդյունքին հասնելու այս մեխանիզմը:

Խնդրանքն իրականացնելիս, խնդրանքի հեղինակն իրեն որոշակի կախվածության մեջ է դնում հասցեատիրոջից: Հաստատվող կախվածության հարաբերությունը կարող է դրսևորվել թե՛ դիրեկտիվ-թեզիսում (օրինակ՝ for me տիպի արտահայտությունների միջոցով), և թե՛ փաստարկման ռեպրեզենտատիվ ԽԱ-ում (մասնավորապես՝ երբ նշվում է, որ խոսողը դժվարին կացության

մեջ է): Երբ խոսողը հասցեատիրոջ ուշադրությունը հրավիրում է այն փաստի վրա, որ դժվարին կացության մեջ է, դրանով իսկ նա իրեն կախվածության մեջ է դնում հասցեատիրոջից՝ ապավինելով վերջինիս բարյացկամությանը կամ մեծահոգությանը: Իսկ ինչպե՞ս է հասցեատիրոջից խոսողի կախվածության մեջ լինելու արտահայտումը մեծացնում ցանկալի պերլուկուտիվ արդյունքին հասնելու հավանականությունը: Նախ և առաջ, բարձրանում է հասցեատիրոջ անձի կարգավիճակը, ինչը կարող է նրան ավելի բարյացկամ կամ մեծահոգի դարձնել:

Բացի այդ, փաստարկման իսկ-ն ներգործում է նաև հասցեատիրոջ զգացմունքային դաշտի վրա՝ վերջինիս մոտ առաջացնելով կարեկցանքի կամ խղճահարության որոշակի զգացում: Փաստարկման շնորհիվ, հասցեատիրոջ գիտակցության մեջ ակտիվանում է այսպես կոչված «հովանավորչական» դիրքորոշումը: Այսպիսով, փաստարկումն ուժեղացնում է խնդրանքի ներգործությունը հասցեատիրոջ գիտակցության թե՛ սոցիալական, և թե՛ զգացմունքային դաշտի վրա:

Բարդ խնդրանքում օժանդակ իսկ-ի առկայությունը նպաստում է նաև խոսողի նկատմամբ հասցեատիրոջ վստահության աճին, քանի որ խոսողը վերջինիս բացահայտում է դիրեկտիվի իրականացման դրդապատճառը: Եվ, քանի որ խոսողի նկատմամբ հասցեատիրոջ վստահության բարձր աստիճանը ենթադրում է վերջինիս կողմից խնդրանքի կատարման աներկբա կատարում, փաստարկման իսկ-ի կիրառումն, անշուշտ, մեծացնում է ցանկալի պերլուկուտիվ արդյունքին հասնելու հավանականությունը: Այս մեխանիզմի հիմքում ընկած է նաև օժանդակ իսկ-ի ներգործությունը հասցեատիրոջ զգացմունքային դաշտի վրա, որը տանում է հաղորդակիցների առավել մերձեցմանը, ինչն էլ, իր հերթին, նպաստում է հասցեատիրոջ մոտ խնդրանքի կատարման պատրաստակամության ձևավորմանը: Տվյալ դեպքում, վստահության աստիճանի աճը պայմանավորված է հասցեատիրոջից խոսողի կախյալ վիճակի հաստատմամբ:

Ի տարբերություն շանտաժի կամ խորհրդի, խնդրանքը հիմնականում առավել չեզոք է համագործակցության առումով, չնայած, ընդհանուր առմամբ, այն կարելի է մոտ համարել հաղորդակիցների փոխհարաբերության ավելի շուտ կոնֆլիկտային քան համագործակցային կողմին, քանի որ այն որոշակիորեն դիպչում է հասցեատիրոջ շահերին: Փաստարկման օժանդակ իսկ-ն

կարող է որոշ չափով չեզոքացնել խնդրանքի առաջ բերած կոնֆլիկտայնությունը, և անգամ նպաստել հասցեատիրոջ մոտ խոսողի նկատմամբ համագործակցային վերաբերմունքի հաստատմանը, ինչպես օրինակ՝ մարդկային հարաբերություններում փոխօգնության սկզբունքի ակտիվացման դեպքում:

Օր՝ 1. Արի միասին շուտ անենք վերջացնենք հա՛: Թե չէ այսպես մնա, կմնա:
2. I'm afraid I am not [good enough for this world]. That is why want you to reform me. You might make it your mission if you don't mind, cousin Cecily.
[3] [p.33]

Բարդ խնդրանքում փաստարկման ԽԱ-ն ներգործում է նաև հաղորդակիցների փոխհարաբերության այնպիսի սոցիալ-հոգեբանական ասպեկտի վրա, ինչպիսին է հաղորդակիցների շահագրգռվածությունը՝ առաջացած արտահաղորդակցային խնդիրներն իրականացնելու գործում: Օժանդակ փաստարկման ԽԱ-ի առկայությունը ցույց է տալիս խոսողի մեծ շահագրգռությունը՝ հաղորդակցի կողմից ցանկալի գործողության կատարման նկատմամբ: Միևնույն ժամանակ, բարդ խնդրանքներում փաստարկումը կարող է ուղղակիորեն մատնանշել հաղորդակցի՝ ունեցած շահագրգռությունը՝ խոսողի համար ցանկալի գործողության կատարման մեջ: Սա, օրինակ, կարող է լինել մի փաստարկ, որը շեշտում է հաղորդակցի համար տվյալ գործողության հեշտությունը, կամ հաղորդակցի համար գոյություն ունեցող շահը, որն, իհարկե, հաղորդակցի մոտ ստեղծում է տվյալ գործողության կատարման պատրաստակամության տրամադրություն: Բնականաբար, հաղորդակիցների փոխհարաբերությունների նշված գործոնների զուգակցման հետևանքով, իրական հաղորդակցության գործընթացում խնդրանքի փաստարկումը կարող է բարդ ներգործություն ունենալ հաղորդակցի կողմից խոսողի համար ցանկալի գործողության կատարման հավանականության բարձրացման վրա:

Պետք է նշել, որ վերը քննարկված փաստարկման ԽԱ-երից յուրաքանչյուրին հատուկ է փաստարկման ուժի որոշակի աստիճան: Այսպես, առավել ուժեղ կաբելի է համարել փաստարկ-դրդապատճառները. օրինակ՝ They don't seem to notice us at all. Couldn't you cough? [3] [p.56] իսկ առավել թույլ՝ այն փաստարկները, որոնք արտահայտում են խոսողի ցանկությունը՝ հաղորդակցի կողմից որոշակի գործողության կատարման համար. օրինակ՝ I would love if you never hid anything from me!

Քանի որ բարդ խնդրանքում փաստարկման խԱ-ն մոդիֆիկացիայի է ենթարկում հաղորդակիցների փոխհարաբերությունների այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են վստահություն, կախվածություն, համագործակցություն, շահագրգռվածություն, ապա այն դեպքերում, երբ հաղորդակիցների միջև գոյություն ունի վստահության բարձր աստիճան, սովորաբար գործածվում է ոչ թե բարդ, այլ՝ պարզ դիրեկտիվ. Օրինակ՝ *For Goodness sake, don't play that ghastly music, Algy!* [3] [p. 24].

Փաստարկված խնդրանքը գործածվում է հիմնականում երեք տեսակի իրադրություններում.

Առաջին տեսակ. խոսողը կարծում է, որ խոսակցի կողմից բավարար չափով համագործակցություն չի ակնկալվում, մասնավորապես՝ վերջինիս մոտ վստահության հնարավոր պակասի, կամ իր անկախությունը դրսևորելու պատճառով. Օր.՝ *If you would care to verify the incident, pray do so.* [3] [p.47]

Երկրորդ տեսակ. Պարզ խնդրանքի փոխարեն բարդ խնդրանքի գործածման երկրորդ բնորոշ իրադրությունը հետևյալն է. խոսողի մոտ չափազանց մեծ ցանկություն կա հասնելու նրան, որ հաղորդակիցը կատարի որոշակի գործողություն. Օր.՝ *Pray, Ernest, don't stop. I delight in taking down from dictation.* [3] [p.41]

Երբեմն, չափից դուրս ցանկանալով, որ հաղորդակիցը կատարի խնդրանքում արտահայտված գործողությունը՝ խոսողը, փաստարկված խնդրանքի միջոցով, այնպես է ներկայացնում ընթացիկ հաղորդակցային իրադրությունն, ասես խնդրանքի պերլոկուտիվ նպատակին հասնելու համար իր և հաղորդակցի միջև վստահության և համագործակցության բավարար աստիճան չկա, չնայած՝ հնարավոր է, որ իրականում դա այդպես չի:

Խնդրանքի կատարման հավանականությունը մեծացնելու մեծ ցանկության դեպքում, խոսողը հաճախ նաև դիմում է «չափազանցված փաստարկման» [5] [p.53]: Նա մի շարք փաստարկներ է բերում իր խնդրանքի կատարման օգտին, որի հետևանքով հասցեատիրոջ մոտ խնդրանքի կատարման համար բարենպաստ տրամադրություն է ստեղծում. ավելին, հասցեատերն իր պատրաստակամությունը կարող է հայտնել՝ կատարելու խնդրանքը: Սակայն, երբ նման իրադրության մեջ խոսողը շարունակում է նորանոր փաստարկներ բերել իր խնդրանքի օգտին, սա հաճախ հակառակ արդյունքի է

բերում: Հասցեատերը կարող է լրացուցիչ փաստարկներում թույլ կողմ տեսնել և փոխել միտքը:

Երրորդ տեսակ. Փաստարկված խնդրանքի կիրառման երրորդ բնորոշ իրադրությունն է. խոսողը ենթադրում է, որ դիրեկտիվի կատարման համար բավարար պայմաններ գոյություն չունեն և այդ բացը լրացնում է հենց ռեպրեզենտատիվ փաստարկի միջոցով. օրինակ Gwendolen: In fact, if I may speak candidly – Cecily: Pray do! I think that whenever one has anything unpleasant to say, one should always be quite candid. [3] [p.47]

Բնական է, որ իրական հաղորդակցային իրադրություններում հազվադեպ է պատահում, որ փաստարկված խնդրանքի այս երեք տեսակների իրադրությունները հանդես գան «մաքուր» տեսքով. դրանք շատ հաճախ զուգակցվում են միևնույն իրադրության մեջ:

Այսպիսով, փաստարկված խնդրանքը պարզ խնդրանքից տարբերվում է հոգեբանական (նպատակաուղղվածության ավելի մեծ ուժով) և փոխհարաբերությունների (այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ հաղորդակցի մոտ վստահության պակաս կամ համագործակցության ցանկության բացակայություն) պլանով, ինչպես նաև խնդրանքի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ամբողջությամբ:

Գոյություն ունեն խոսքային հաղորդակցության այնպիսի ոլորտներ, որոնք ինքնին ենթադրում են ոչ թե պարզ, այլ՝ բարդ խնդրանքի գործածում: Դրանք թվին են, մասնավորապես, պատկանում որոշակի հիմնարկային ոլորտներ, որտեղ, օրինակ, դիմում-խնդրանքները պարտադիր պետք է փաստարկված ներկայացվեն, կամ՝ ղեկավարման ապարատում, որտեղ փաստարկված խնդրանքները շատ ավելի արդյունավետ կերպով են իրականացվում, քան՝ պարզ խնդրանքները:

Խոսողի խնդրանքի փաստարկման ուսումնասիրությանը զուգընթաց, հետաքրքիր է նաև դիտարկել *հաղորդակցի* փաստարկումը՝ խնդրանքի չկատարման դեպքում: Նման փաստարկման հիմքում հաճախ ընկած է հասցեատիրոջ անձնական հարմարության-անհարմարության նկատառումը, որը որոշակի հանգամանքներում կարելի է դիտարկել նաև որպես «եզոցենտրիկ փաստարկ» [5] [p.53]. օրինակ՝ 1. Կներես, ծեռքինս ծանր էր, գիդքդ չքերեցի:

2. Ի պատասխան իր տան մոտ իրեն իջեցնելու խոսողի խնդրանքի՝ հաղորդակիցն ասում է. «Մենք խանջյանով ենք գնում» (այսինքն՝ իրեն հարմար չի) :

Ինչպես ակադեմիկոս Գ. Բրուտյանն է նկատել, նման փաստարկներին շատ մոտ են «Ինձ թվաց...», «Ես կարծեցի...» տիպի փաստարկները: Օրինակ՝ իրադրություն 1. Ընկերը խնդրել է իրեն չսպասեցնել, իսկ մյուս ընկերը, հանդիպումից ուշանալով, ասում է. «Ինձ թվաց դու էլ ուշ կհասնես»:

Իրադրություն 2. Հյուրը ջուր է ուզում, իսկ տանտերը դրա փոխարեն թան է բերում: Երբ պարզվում է, որ ջուրը դեղահաբ ընդունելու համար էր խնդրվել, տանտերն ասում է. «Կներես, ես կարծեցի շոգին սառը թանը քեզ ավելի դուր կգա»:

Այստեղ թյուրըմբռնման հիմնական պատճառն այն է, որ հասցեատերը խոսողի խնդրանքի փոխարեն այլ խնդրանք է կատարում. չունենալով բավարար տեղեկություն այն մասին, թե ինչով է պայմանավորված տվյալ խնդրանքը՝ հասցեատերը անհիմն կերպով այն փոփոխության է ենթարկում: Խնդրանքի սխալ մեկնաբանությունից խուսափելու համար անհրաժեշտ է ճիշտ ընկալել ողջ իրադրային համատեքստը: Սույն աշխատանքի հեղինակը խոսողական ակտի ճիշտ մեկնաբանության նպատակով համատեքստի վերլուծության թեման արծարծել է առանձին հոդվածում [6]:

Ապագայում ուսումնասիրության առարկա կարող է դառնալ նաև խնդրանքի խոսողական ակտի հարաբերությունը այլ խոսողական ակտերի հետ, ինչպիսիք են՝ հրամանը, առաջարկը, խորհուրդը և այլն:

Օգտագործված գրականություն

1. Austin J.L. – How To Do Things With Words, Oxford University Press, New York, 1973
2. Searle J.R. – A Classification of Illocutionary Acts, Cambridge University Press, London, 1976
3. Wilde O. – The Importance of Being Earnest, Moscow - 1947
4. Shaw I. – Nightwork, Pan Books, London - 1976
5. Брутян Г. – “Очерк теории аргументации”, Ереван – 1992.
6. Գ. Հովսեփյան, “Խնդրանքի արտահայտումը հաղորդակցության գործընթացում”, “Կանթեղ 2” գիտական հոդվածների ժողովածու, Ե.2001: